## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Ամուլ հակամարտութեանց շնորհիւ ժամանակ շատ վատնեց։ Թէ ինչպէս կամ ով էր մեղաւորը—այդ խնդիրը չէ, որ ուզում ենք քննութեան առնել։ Վերջապէս կազմուած է Յանձնաժողովը, որ իր առաջ մի քանի ամիս միայն ունի գործելու և այդ մի քանի ամսից երեքն ամրան ամիսներ են, որոնց ընթացքում հաւաքական մարմինները սովորաբար գործ չեն կատարում։

Յանձնաժողովի առաջ երկու խնդիր կայ. հանդէսների կազմակերպութիւն և հանգանակութիւն։ Մէկի նշանակութիւնը բարոյական է, միւսինը՝ նիւթական. մէկը, որքան և չքեղ ու հրահանգիչ լինի, անցողական նշանակութիւն ունի, միւսի բարիքները պէտք է լինեն տեւական։

Առանց անվիտանալու առաջին խոշոր նշանակութիւնը, մենք ուզում ենք կանգ առնել երկրորդի վրայ։ Որոշուած է կազմել երկու դրամագլուխ դպրոցների և գրականութեան ապահովութեան համար։ Այդէն որոշ գումարներ հաւաքուած են առաջին նպատակով, բայց համազգային հանգանակութեան դեռ չէ ձեռնարկուած։ Այդ խնդիրն է, որ ամենից կարևորն է մեր կարծիքով և որի կազմակերպութեան մասին է, որ կուզէինք մի քանի խօսք ասել։

Մեզ թւում է, որ հայ տպագրութեան և տառերի գիւտի յօբելեանները այն ժամանակ միայն համազգային բնաւորութիւն կը ստանան, երբ ոչ միայն հայաբնակ բոլոր վայրերում հանդէսներ, սաբբեթ, այլ մանաւանդ երբ բոլոր հայերը մասնակցեն դպրոցական և գրական դրամագլուխների հանգանակութեան։ Այդ լայնածաւալ մասնակցութիւնը ընդհանուր գործին, մեծագոյն ազդակը կը դառնար ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան և լաւագոյն ոգիները դպրոցի և գրականութեան նշանակութիւնը պարզելու. ամենքին։ Միաժամանակ այդ ձևով միայն հնարաւոր է խոշոր գումարների հանգանակութիւնը։

Այս նպատակին հասնելու համար շատ լաւ կը լինէր, որ Յանձնաժողովը հետևէր թոքախտի դէմ կուռող մարմինների օրինակին։ Դրա համար պէտք է ընտրել մի որոշ օր, որի ընթացքում բոլոր հայաբնակ վայրերում՝ լինի գիւղ թէ քաղաք յատուկ հանգանակիչ խմբեր շրջելով անէ տուն և խանութ խանութ՝ պէտք է դրամ հաւաքեն։

Նրանք կարող են ցրել Յանձնաժողովի կողմից մի կոչ՝ ժողովրդին ուղղած և, որ շատ սիրուն բան կը լինէր, Ս. Սահակի և Մեսրոպի պատկերները, որոնք այդ ոգիով կը մանէին ամէն տուն ու խրճիթ։

Այս դէպքում շատ մեծ դեր կարող են խաղալ դպրոցականները և ուսուցիչները, ինչպէս նաև ուրիշ դասանատներ, որոնք ցանկութիւն կը յայտնեն տրամադրելու իրենց միօրեայ աշխատանքն ու ժամանակը։ Մեծ վայրերը կարելի է բաժանել թաղերի, թաղերը՝ փողոցների և այդպիսով կարելի է մտնել բաւի բուն մտքով ամէն հայ տուն և ամէն տեղ ընդհանրացնել դպրոցի և գրականութեան գաղափարն ու կարևորութիւնը։

Ճանաչելով մեր ժողովրդին, մանաւանդ նրա խոնարհ խաւերի սիրտն ու տրամադրութիւնը, կարող ենք վստահացնել, թէ ոչ մի հանգանակիչ խումբ ձեռունայն չէր հեռանայ նրանց տներից։ Սպիտակ ծաղկի տեղը կարող են բռնել Ս. Սահակի և Մեսրոպի պատկերները. կարելի էր նաև փոքրիկ կտորներ ցրել որոշ արժէքի, որ նախապէս կը պատրաստէր Յանձնաժողովը և կուղարկէր ամէն տեղ։

Գարունն անցաւ։ Ամառան ընթացքում քաղաքները դատարկւում են մտաւորական տարրերից, իսկ գիւղերում հում է դաշտային աշխատանքը։ Ամրան ընթացքում անհարմար է հանգանակութեան գործը ազդովին գլուխ բերել. մնում է յետաձգել աշնան, իսկ մինչև այդ՝ Յանձնաժողովը բաւական ժամանակ կունենայ պատրաստութիւններ տեսնելու։

Գործի այս ընդհանրական կազմակերպութիւնը մի լայնածաւալ շարժում կը մտցնէր հայութեան բոլոր խաւերում և տօնին ու հանգանակութեան իսկապէս որ համազգային կերպարանք կը տար։ Դա կը լինէր մի շատ լաւ առիթ վարժեցնելու ժողովուրդին ինքնօգնութեան։ Մինչև իր յետին խորշերը ժողովրդական զանգուածը կը թափանցէր մի գաղափարով և կունենար մի գեղեցիկ առիթ պիտակցելու հաւաքական միտքը, արժէքն ու նշանակութիւնը։ Վերջապէս մի անգամ զգէ մտաւորական դասն առիթ կունենար տեսնելու գործի մէջ այն ժողովուրդին, որի անունից մարդիկ սիրում են այնքան շատ խօսել։

Ն. Ա.